

## Արձանագրություն 2

2014 թ. մարտի 1-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի հերթական նիստը՝ նախագահությամբ Ռ. Հակոբյանի, քարտուղարությամբ՝ Թ. Ասոյանի:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 29-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի աշխարհագրության ամբիոնի 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը:

/զեկ.՝ ամբիոնի վարիչ  
Բ.Պ.Մնացականյան/

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվե-տվությունը:

/զեկ.՝ ամբիոնի վարիչ Հ.Ա.Մելիքյան/

3.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության և առողջ ապրելակերպի ամբիոնի 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվե-տվությունը:

/զեկ.՝ ամբիոնի վարիչ Ա.Սիմոնյան /

4. Սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման մեթոդաբանական հիմնահարցերը:

/զեկ.՝ ՀՈԻՖ փոխդեկան Ա.Ե.Համբարձումյան/

5.Ընթացիկ հարցեր:

Նիստը բացեց գիտական խորհրդի նախագահ, ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանը: Ողջունելով ներկաներին՝ նա ասաց, որ սկսվում է ամբիոնների և ֆակուլտետների հաշվետվությունների շարքը, որի ընթացքում ամբիոնների վարիչները և ֆակուլտետների դեկանները պետք է հանգամանորեն ներկայացնեն իրենց ղեկավարած ստորաբաժանումների կատարած աշխատանքը 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի ընթացքում՝ առավել կարևորելով ուսման որակի բարձրացման հետ առնչվող հարցերը:

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի աշխարհագրության ամբիոնի գործունեության հաշվետվությամբ հանդես եկավ ամբիոնի վարիչ Բ. Մնացականյանը: Ձեկուցողը նշեց, որ փոփոխություններ են կատարվել ուսումնական պլաններում՝ կապված նոր առարկաների ներմուծման հետ /բակալավրիատում՝ սերվիս, կադաստրային գործ բաժիններում, մագիստրատուրայում՝ բնապահպանություն/: Կրթական ծրագրերը հաջողությամբ իրագործելու նպատակով ամբիոնի աշխատանքներում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության լավագույն մասնագետները, որոնք կապ ունեն տարբեր կազմակերպությունների հետ, ինչը հնարավորություն է տալիս ուսանողների պրակտիկան կազմակերպել և անցկացնել բարենպաստ պայմաններում, ինչպես, օրինակ, ՀՀ հիդրոմետ ծառայությունում, Երկրագիտական թանգարանում և այլն:

Բ. Մնացականյանն անդրադարձավ պրոֆեսորադասախոսական անձնա-կազմի վերապատրաստման, գիտահետազոտական աշխատանքների կատարման, տարբեր գիտաժողովներին և միջազգային ծրագրերին մասնակցելու հարցերին: Այնուհետև արվեցին առաջարկություններ՝ միտված կրթական ծրագրերի բարելավմանը և կրթության որակի բարձրացմանը:

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և հաշվողական տեխնի-կայի ամբիոնի վարիչ Հ. Մելիքյանը ներկայացրեց 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը: Ձեկուցողն անդրադարձավ կրթական ծրագրերի բարելավման, էլեկտրոնային ուսուցման <<E-Learning.GSU>> համակարգում նյութերի ներբեռնման, նոր առարկաների՝ <<Examenation.GSU>> համակարգով ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման, լաբորատոր աշխատանքներ կատարելու և հարակից այլ հարցերի: Ամբիոնում հիմնական ուշադրությունն ուղղված է ավարտական աշխատանքներին և մագիստրոսական թեզերին:

Ա. Միմոնյանը ներկայացրեց նշված ժամանակահատվածում ԳՊՀ ԲՆՖ կեն-սաբանության և առողջ ապրելակերպի ամբիոնում կատարված աշխատանքների հաշվետվությունը: Ըստ զեկուցողի՝ կրթական ծրագրերը վերանայվել են, թարմացվել, ներառվել են նոր դասընթացներ, ուսանողներին տրվել անհրաժեշտ կրթական նյութեր: Գրեթե ավարտված են դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստման աշխատանքները: Ուսանող-ները՝ հատկապես դեղագործները և կենսաբանները, դրսևորում են բարձր առա-ջադիմություն և ակտիվություն, սակայն մտահոգիչ է նրանց իմացությունը անգլերենի և ռուսերենի առումով: Պետք է հարստացնել ուսումնամեթոդական բազան,

հատուկ վերաբերմունք դրսևորել պրակտիկ աշխատանքներին, համագործակցել ՀՀ ակադեմիական համապատասխան հաստատությունների հետ:

«Մովորողների գիտելիքների ստուգման և գնահատման մեթոդաբանական հիմնահարցերը» թեմայով զեկուցում կարդաց ՀՈԻՖ փոխդեկան Ա. Համբար-ձումյանը: Նա հանգամանորեն ներկայացրեց խնդիրների այն շրջանակը, որն առնչվում է գիտելիքների ստուգման և գնահատման մեթոդաբանության հետ:

Զեկուցման շուրջ եղան ելույթներ, ծավալվեց մտքերի փոխանակություն, տեղի ունեցավ քննարկում:

Ընթացիկ հարցերի մասին ելույթ ունեցավ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանը: Նա ներկայացրեց եվրոպական համագործակցության ծրագրեր, որոնց շուրջ պետք է աշխատել, ներկայացնել դրամաշնորհային ծրագրեր, ինչպես նաև ԳՊՀ գիտ-խորհրդի անդամներին ներկայացրեց ԳՊՀ կառավարման խորհրդի նախագահ Հ. Հ. Հակոբյանի խորհրդում ունեցած ելույթի հիմնական դրույթները:

Քննարկվեց հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, մանկավար-ժական գիտությունների թեկնածու Թամար Ալեքսանյանի դիմումը իրեն դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին: Հարցը ներկայացրեց պրոռեկտոր Ն. Կուտուզյանը՝ նշելով, որ Թ. Ալեքսանյանի գիտամանկավարժական գործու-նեության տվյալները համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու ԲՈՀ-ի առաջադրած պահանջներին: Կազմվեց հաշվիչ հանձնաժողով /նախագահ՝ Հ. Ղաջոյան, անդամներ՝ Պ. Մուրադյան, Թ. Ասոյան/ և անցկացվեց փակ, գաղտնի քվեարկություն: Քվեարկության արդյունքները. կողմ՝ 29, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Հիմք ընդունելով հաշվետվությունները, ելույթները և քվեարկության արդյունքները՝ գիտորհուրդը

Որոշեց՝

1. ԳՊՀ ԲՆՖ աշխարհագրության ամբիոնի վարիչ Բ. Մնացականյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.ԳՊՀ ԲՆՖ ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի վարիչ  
Հ. Մելիքյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված  
աշխատանք-ները գնահատել բավարար:

3.ԳՊՀ ԲՆՖ կենսաբանության և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ Ա.  
Սիմոնյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված  
աշխատանք-ները գնահատել բավարար:

4.ԳՊՀ ՀՈԻՖ փոխդեկան Ա. Համբարձումյանի զեկուցումն ընդունել ի գիտու-  
թյուն:

5. ԳՊՀ դասախոս Թ. Ալեքսանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում,  
որոշումը ներկայացնել ԲՈՀ՝ հաստատման:

Գիտխորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտքարտուղար՝ Թ. Ասոյան